

605

1911

839.814

U-58

839-810.

W-58



ԱՆԴԵՐՑԻՆ, Հայոց

ՍՈՒԱԿԻ ԵՐԳԸ

ՆԵՐԻՐՈՎԻԶ-ԹԵՂԵՆԿԵՆԿ

ՈՂՈՐՄԱՆ ԹՅԱՄՈՒ ԱՂԲԻՒՐԸ

Հ 0 0 4

Ք է կ դ պ է ի .



№ 5

Թ Ի Ց Լ Ի Ա

1911


Տպարան «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Վելեամինովսկ. № 18.

այ ժամանք Երշաբա գո
Են այս համարական

Տակ ՀԱԿ ԳԻՒՆ

ՕԳՐՈՒԹԵԱ

Կարմէի 28804-ԱՀ



ՍՈՒԱԿԻ ԵՐԳԸ

Ունգարիայի քաղաքներից մէկի ամուլը ու
նեղ բանտում նստած էր մի խեղճ կալանաւոր:
Զար մարդիկ շղթայել էն նրան և բանտը դրել:
Բանտը խոնաւ էր, մութ ու սառը: Նրան միայն
հաց էին, առաջիս և ջուրը: Անկողնի փոխարէն
նրա տակը թաց յարդ էին զցել: Նա նստած
էր այնտեղ երկար տարիներ—գունատ, հիւանդ
ու տրտում: Արել հազիւ էր ներս թափանցում
նրա նեղ լուսամուտից, թարմ օգը չէր անցնում
բանտը: Տիպուր-տրտում նստած բանտում, նա
մտածում էր իր ազգականների, իր փոքրիկ ե-
րեխաների մասին, մտածում էր, «գուցէ նրանք



Տ. Ա. Խաչիկյան Խ. 11774-87

մոռացել են ինձ և կարծում են, թէ մեռած եմ արդէն»:

Նա մօտեցաւ լուսամուտին: Հրաշալի ամառային երեկոյ էր. արել մայր էր մտնում անտառի յետնում կարմիր լոյսով լուսաւորելով ծառերի գագաթները. մարդիկ անցուղարձ էին անում փողոցներում: Բանտն այնքան բարձր էր, որ մարդիկ հազիւ էին նշմարւում: Նա ձայն տւաւ նրանց, բայց ոչ ոք չլսեց:

* * *

Կապոյտ երկնքում թռչուններ էին ճախրում: Նրա լուսամուտի առաջով հանդարտ անցնում էր արծիւր:

«Արծիւր, արծիւր, կանչեց կալանաւորը. Նըստիր պատուհանիս վրայ, պատմիր, թէ ի՞նչ է կատարւում երկրի վրայ, երգ երգիր ինձ համար»:

—Ո՛չ, պատասխանեց արծիւր. քո պատուհանը շատ նեղ է ինձ համար. և չեմ էլ կարող պատմել, թէ ի՞նչ է կատարւում երկրի վրայ. ես այնտեղ շատ սակաւ եմ իջնում. ես հիւ-

սում եմ իմ բոյնը բարձրաբերձ ժայռերի և հինաւուրց կաղնիների վրայ, հեռու մարդկանցից, որ նրանք չաւերեն իմ բոյնը: Ես քեզ համար երգ չեմ երգիլ, որովհետեւ ես երբէք չեմ երգում երկրի վրայ. ես թռչում պահում եմ դէպի վեր և իմ երգը լսում է միայն լուսատու արեւը: Եւ հզօր թիւերը լայն-լայն տարածած արծիւր դէպի երկինք սլացաւ ու ծածկւեց ամպերի մէջ...

* * *

«Կարապ, կարապ, պատմիր, ի՞նչ է կտարւում երկրի վրայ, երգ երգիր ինձ համար:»

—Ո՛չ, պատասխանեց կարապը. ես չեմ պատմիր քեզ, թէ ի՞նչ է կատարւում երկրի վրայ: Ես լողում եմ միշտ ջինջ ու հով ջրերում, կանաչ եղեգների մէջ: Առաւօտեան, վառարշալոյսին, երբ ջուրը վարդի գոյնով է ներկւում, ես ձայն եմ տալիս կարմիր արևին. «ողջոյն քեզ, արև:» Ո՛չ, ես քեզ համար երգ չեմ երգիլ, ես իմ երգը կերգեմ մի անգամ միայն, կեանքիս վախճանին...»

Եւ կարապը սաւառնեց օդում, թափահարելով ձիւնափայլ թևերը:

* *

«Ճնճղուկներ, ճնճղուկներ, նստեցէք պատունիս վանդակի վրայ, ասացէք, ի՞նչ է կատարւում երկրի վրայ, երգ երգեցէք»:

—Ծիւ, ծիւ, ծիւ, մենք երբ պատմենք, երբ երգենք. մենք գեռ պէտք է գնանք հաւաքենք ցորենի այն հատիկները, որ ահա այնտեղ թափել է ջաղացպանը...

* *

Բայց ահա յանկարծ մի գորշ թռչնակ մօտեցաւ բանտին, պտտւեց լուսամուտի առաջ և նստեց երկաթի վանդակի վրայ:

«Բարեկ եկար, սոխակս. շնորհակալ եմ, որ այցելեցիր ինձ, սիրուն թռչնակ. ասա ինձ, ի՞նչ է կատարւում երկրի վրայ, երգ երգիր»:

—Ես կըպատմեմ քեզ, թէ ինչ է կատարւում երկրի վրայ, ես երգ կերգեմ քեզ համար, ասաց սոխակը:

Եւ այնպիսի քաղցր ձայնով սկսեց երգով իսեղճ կալանաւորը ուրախութեան արցութափելով, ընկաւ յարդի վրայ. նա շարունակավում էր ու ականջ դնում:

—Երէկ առաւօտեան, լուսաբացին, երգով էր սոխակը, այնքան թարմ էր օդը և զով. թռայ դէպի քո տունը, նստեցի կանաչ ընկողենու վրայ բաց պատուհանի առաջ և սկսեց դայլայիկս. օրօրոցում քնած էր քո մանկիկ նա բաց արեց իր մեծ, պայծառ աչքերը հարցնում էր. «Ուր է հայրիկս, ուր է հայրիկս և լսում էր իմ երգը...

Քո բարեկամները լալիս են քեզ յիշելու նրանք քեզ սիրում են, շատ են սիրում, շատ ուզում քեզ տեսնել: Մի յուսահատված Աստւած տեսնում է, որ դու անմեղ ես. մագիկ կարձակեն քեզ և դու նորից ազատութիւն կստանաս, լոյս ու պայծառ օրեր կտեսնեմ մաքուր օդ կընչես:

Քո երեխաները կըփայլայէն, կըհամբուր քեզ: Հանդիստ ամառային երեկոյ կըլինի. ծոերից երկար ստւէրներ կընկնեն գետնի վրա:

արևի շողքից պատուհանների ապակիները կը-
պսպղան. պատշգամբումնստած դու կըպատմես
երեխաններիդ, թէ ինչ օրեր ես քաշել դու...

Դու կըխրատես նրանց, որ երբէք թոյլ
չտան չար մարդկանց չար գործեր կատարել.
որ չնեղանան չար մարդկանց վրայ, այլ խըն-
դրեն-աղաչեն Աստծուն, որ բոլոր մարդիկ սի-
րեն միմեանց, ինչպէս եղբայրն է սիրում
եղբօրը...

Եւ քո երեխանները կըլսեն քեզ. նրանք կըմե-
ծանան, հասակ կառնեն, և դու կըտեսնես, որ
նրանք բարի և ազնիւ մարդ են դարձել, որ
նրանք օգնում են աղքատներին ու թշւառներին:

Դու երկար, շատ երկար կապրես. քո մա-
զերը կըճերմակեն ձիւնի նման, բայց քո սիրուը
միշտ ուրախ կըբարախի:

Իսկ երբ որ դու կըմեռնես, ամենքը կողբան,
ոուգ կանեն քեզ համար և կաղօթեն Աստծուն.
մի պայծառ, արև օր կըտանեն քեզ կանաչազարդ
գերեզմանատուն: Քո գերեզմանի վրայ վարդի
թուփ կըտնկեն և ամեն առաւօտ արշալոյսին ես
երգ կերգեմ քո շիրիմի վրայ:

ՈՂՈՐՄԱՆ ԹԵՇԱՍՈՒ ԱՂԲԻՒՐԸ

Կարաւանն անցնում էր անապատով... Ա-
րևի կիզիչ ճառագայթները երկնքից կրակ էին
թափում: Աւազի ոսկեգոյն թումբերը սփուռում
էին երկար տարածութեան վրայ: Երկինքը կոր-
չում էր մի տեսակ փայլի մէջ: Առջեռում տա-
րածում էր սպիտակ, գալարուն ուղին. իսկա-
պէս ասած, նա չկար էլ. այդ՝ սատկած ուղտե-
րի ոսկորներն էին, որ ճանապարհի էին նմա-
նում: Զրհորները հեռու էին միացել—ուխտա-
ւորները իրանց հետ երկու օրւայ ջուր էին
վերցրել: Միայն վաղը նրանք հազիւ հասնէին
անշուք արմաւենիներով պատած օազիսի: Դեռ
առաւօտեան հեռւից նրանց աչքին երկում էին
հրաշալի միրաժներ՝ կապուտակ ջրերով և բազ-

մաստւեր անտառներով։ Այժմ դրանք էլ էին
ծածկւել։ Ամեն ինչ կարծես մեռած էր, Քնածի
էին նմանում ճանապարհորդները, որոնք, օրոր-
ւելով իրանց ուղարկի վրայ, հետևում էին ու-
ղեցոյց առաջնորդներին։ Մէկն սկսեց երգել,
բայց երգը կարծես իբրև ծանր քար էր պառ-
կում նրա սրտի վրայ։ Եւ երգողն իսկոյն սուս
կացաւ։ Լոռութիւն էր տիրում ամեն տեղ. լը-
ւում էր միայն աւազի մէջ խրւող բարակ ոս-
ների ձայնը և արկի տաքութիւնից թագնւած
թխադէմ բեգուին կանանց ծածկող մետաք-
սեայ վարագոյների խշխոցը։ Ամեն ինչ անզգայ
դրութեան մէջ էր, մինչև անզամ մարդիկ ան-
զգայ էին դարձել։

—

Ճանապարհին կարաւանը պատահեց մի մեռ-
նող արաբի։ Նրա կրղին ընկած էր անդադար վա-
գելուց վաստակած ձին, արաբը բուրնուսում փա-
թաթած գլուխը դրել էր իր ընկերոջ անշնչացած
դիակի վրայ. . . Ուղտերն անցնում էին անուշադիր։
Մարդկանցից էլ ոչ ոք գլուխն անզամ չըդարձ-

րեց դէպի այն կողմը, ուր մետաքսի տակից
ագահաբար հետեւում էին նրանց անապատում
անօդնական մնացած արաբի աչքերը... Արդէն
կարաւանն անցաւ։ Միայն այն ծերունին, որ
ամենից վերջն էր գնում, յանկարծ վայր իջաւ
ուղարկց և մօտեցաւ արաբին։

— Ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչ կայ։

«Զուր», հազիւ կարողացաւ արտասանել
մեռնողը։

Ծերունին նայեց կարաւանին, որ դանդաղ
քայլերով հեռանում էր. ոչ ոք յետ չէր նայում։
Ծերունին գլուխը բարձրացրեց դէպի երկինք և
այնտեղից, կարծես, մէկը մի միտք ներ-
շնչեց նրան։

Նա իսկոյն վեր բերաւ ուղարկց ջրով լիքը
տկերը... Առաջ լւաց մեռնողի երեսն ու բերա-
նը, յետոյ ջուրը մօտեցրեց նրա շրթունք-
ներին։

Մեռնողի դէմքը կենդանութիւն ստացաւ։
«Դու Օմմիադների ցեղիցն ես»։

— Այս, պատասխանեց ծերունին։

«Ես այդ իմացայ քո ձեռքի վրայ եղած

նշաններից... Ես ելկամիզների ցեղիցն եմ:
Մենք անհաջությամբներ ենք...»

— Անապատում, Աստծոյ առաջ, մենք միմի-
այն եղբայրներ ենք: Խմբի... Ես ծեր եմ, դու
ջահել: Խմբի և ապրիբ...

Մեռնողն ագահութեամբ մօտեցրեց իր
վրթունքները տկին:

Ծերունին նստացրեց նրան իր ուղտի
վրա...

— Գնա և պատմիր ձերոնց Օմմիադներից
մէկի վրժիխնդրութեան մասին, ասաց նա:

«Իսկ դժու:»

— Ողջ մէկ է, ես արդէն ծեր եմ, երկար
չեմ ապրելու:

«Գնանք միասին:»

— Անկարելի է. ուղտը փոքր է, այդպիսի
ծանրութիւն նա անկարող է տանել:

Արաբը տատանուում էր: Բայց նա ջահել
էր. նրան սպասում էր փառք, սէր...

Նա լուռ ու մունջ նստեց...

Կանգ առաւ...

«Դու ազգականներ ունես», հարցրեց նա:

— Ո՞չ, պատասխանեց ծերունին:
«Մնաս բարեւ:»

Նա գնաց... Ծերունին երկար նայում էր
նրա յետեկից... Նա խաբել էր իր թշնամուն. Նա
որդիներ ունէր և նրա որդիները քաջ տղա-
մարդիկ էին:

Կարաւանը անյայտացաւ հեռաստանում,
որի երկարութիւնից մարդու տեսողութիւնը
թուլանում էր...

Արեկի կիզիչ ճառագայթները կրակ էին
թափում...

Ծերունին փաթաթեց իր գլուխը ծած-
կոյթով և պառկեց, երեսը դէպի գետին
դարձնելով...

Անցել էր մի քանի ամիս:

Նոյն ոսկեգոյն թումբերը փայլում էին ան-
հուն տարածութեան վրայ: Նոյն կարաւանը յետ
էր դառնում: Ուխտաւորները, ինչպէս և այն

դամ, վերջին օազիսից երկու օրւայ ջուր
վերցրել: Քնաթաթալիս բեղութինները օրօր-
մ էին յոզնած ուղաբերի վրայ...
Յանկարծ ուղեցոյցը կանգնեց.

Այն Բնչ է, ցոյց տւաւ նա հեռում:
Ուխտաւորները նոյնպէս զարմանքով նա-
մ էին դէպի այն կողմը, ուր ցոյց էր տա-
առաջնորդը...

Այնտեղ, անվերջ աւազների մէջ, կանաչ էր
ուռմ. այնտեղ բարձր, հպարտ արմաւենիներ
, ծաղկում, շքեղ թփերի մէջ կարկաչանոս
սիւր էր խոխոջում և սառն առւտկների ու-
խ քչքչոցը լցնում էր անապատի չարագու-
լ լռութիւնը: Գոյնզգոյն ծաղիկները քնքուշ
ըմունքով կարծես սիրաբար ողջունում էին
նած, վաստակած ուղևորներին:

Առակի մօտ ընկած էր ողորմած ծերու-
յաւերժական մարմինը: Նըան վերցրին,
տաքսի ծածկոցներում փաթաթեցին և տա-
ն իր ցեղի օազիսը:

Արաբների ասելով այդ նոր աղբիւրը սկիզ-
է առել Ալահի հրամանով այն տեղից, ուր

աւազի մէջ մի քանի կաթիլ ջուր է թափւել
ծերունի շէյխի տկից: Բեղութինները այդմ այդ
օազիսը Ողորմած թշնամու աղբիւր
են կոչում:

—•○•—



6056

Ա. Տ.

00004701

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004701

